

## **Ազգային գրադարանային շաբաթ Ապրիլի 13-20**

Շաբաթի կարգախոսն է՝ *Պահպանիր և հիշիր*

Ապրիլի 13-ին Հայաստանի ազգային գրադարանում Վահան Տերյանի ծննդյան 130-ամյակին նվիրված միջոցառմամբ մեկնարկեց Ազգային գրադարանային շաբաթը:

Միջոցառումը կազմակերպել էր Հանրության հետ կապերի և միջոցառումների կազմակերպման բաժինը՝ «Տերյան» մշակութային կենտրոնի հետ համատեղ: Ելույթ ունեցան Անահիտ Մանուչարյանը և «Տերյան» մշակութային կենտրոնի նախագահ Առուշան Հակոբյանը: Միջոցառմանը մասնակցում էին Վահան Տերյանի անվան թիվ 60 դպրոցի սաները: